Հայոց պատմության դասավանդման տեխնոլոգիաներ. նոր զարգացումներ, դասավանդման փիլիսոփայություն և ռազմավարություններ

2025 թ. սեպտեմբերի 27-ին Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմադրամի կողմից տրված դրամաշնորհի ֆինանսավորմամբ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից, նույն ինստիտուտի նիստերի դահլիճում կազմակերպվեց «Հայոց պատմության դասավանդման տեխնոլոգիաներ. նոր զարգացումներ, դասավանդման փիլիսոփայություն և ռազմավարություններ» խորագրով ուսուցչական աշխատաժողով-ամառային դպրոցը։ Ամառային դպրոցին մասնակցել են ՀՀ տարբեր դպրոցներում դասավանդող պատմության քսաներկու ուսուցիչ։ Ամառային դպրոցը մեծ հետաքրքրություն էր առաջացրել ՀՀ ուսուցչական համայնքի մոտ, մասնակցել ցանկացողների քանակն ավելին էր, քան ծրագրավորված էր, ուստի նմանօրինակ աշխատաժողովները հետագայում անցկացնելու մեծ պահանջարկ կա։ Ուսուցիչները ներկայացնում էին ՀՀ տարբեր մարզերի դպրոցներ՝ Լոռի, Շիրակ, Տավուշ, Արագածոտն, Գեղարքունիք, ինչպես նաև Երևանի տարբեր դպրոցներ, այդ թվում և ուսուցիչներ, որոնք նախկինում դասավանդել են Լեռնային Ղարաբաղի դպրոցներում։ Ամառային դպրոցի կազմակերպման գլխավոր հայեցակարգն էր ձևավորել կիրառական կապեր գիտական ակադեմիական արդյունքների և կրթության միջև, մասնավորապես պատմության դասավանդման համատեքստում։ Ակադեմիական գիտության և մանկավարժության միջև հնարավորինս պրակտիկ, փոխլրացնող կապերի ձևավորումը անհրաժեշտ է ՀՀ ներկայիս կրթական միջավայրի համար, քանի որ դպրոցների ուսուցիչները կարիք ունեն դասավանդման նոր մոտեցումների և ռազմավարությունների, որոնց ամենօրյա ռեժիմով կարող են կիրառել և հարստացնել իրենց դասավանդման գործիքակազմը։

Ամառային դպրոցի ծրագրում ներառվել էին Հայոց պատմության բոլոր ժամանակաշրջանների թեմաների դասավանդման հիմնախնդիրներին վերաբերող հինգ դասախոսություններ, որոնք իրականացրել են ինչպես ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատողներ, այնպես էլ ՀՀ գիտահետազոտական ինստիտուտների (Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ) ու համալսարանների (Խաչատուր Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի Ամերիկյան համալսարան) մասնագետներ։

Ամառային դպրոցն անցավ քննարկումների ու համագործակցայնության մթնոլորտում։ Ձևավորված հարթակն հատկապես արդյունավետ էր տարբեր մարզերի ուսուցիչների

միջև համայնքի, ՀՀ գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների մասնագետների հետ մասնագիտական կապերի ու փոխգործակցության ձևավորման առումներով: Բանախոսները ներկայացրեցին իրենց գիտական ակադեմիական հետազոտությունների արդյունքները և, թե ինչպես են այդ արդյունքները բերում պրակտիկ դասավանդման դաշտ: Ամառային դպրոցի ավարտին կազմակերպվեց մասնակից ուսուցիչների կողմից հետադարձ կապերի տրամադրում, որոնցում նրանք արտահայտել են դրական տպավորություններ և, որ ամենակարևորն է, նրանք նշել են, որ սովորեցին ոչ միայն տեսական մոտեցումներ, այլև պատմության դասավանդման չափելի ռազմավարություններ, որոնք արդեն կկարողանան կիրառել իրենց դասարաններում, դիտարկել դրանց արդյունքները և այլն:

Բոլոր ուսուցիչներն արտահայտեցին մեծ ցանկություն և մոտիվացիա կրկին մասնակցելու նմանօրինակ ձեռնարկումներին, ինչպես առկա, այնպես էլ առցանց ձևաչափերում:

Summer School-Workshop "Technologies for Teaching Armenian History: New Developments, Teaching Philosophy and Strategies"

On September 27, 2025, with the funding of a grant from the All-Armenian Foundation Financing Armenological Studies, the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia organized a teacher workshop-summer school entitled “Teaching Technologies of Armenian History: New Developments, Teaching Philosophy and Strategies” in the conference hall of the same institute. Twenty-two history teachers teaching in different schools of the Republic of Armenia participated in the summer school. The summer school aroused great interest among the teaching community of the Republic of Armenia, the number of those wishing to participate was more than planned, so there is a great demand for holding such workshops in the future. The teachers represented schools from different regions of the Republic of Armenia: Lori, Shirak, Tavush, Aragatsotn, Gegharkunik, as well as various schools in Yerevan, including teachers who previously taught in schools in Nagorno-Karabakh. The main concept of organizing the summer school was to form connections between scientific academic results and education, particularly in the context of teaching history. The formation of practical, complementary connections between academic science and pedagogy is necessary for the current educational environment of the Republic of Armenia, as school teachers need new teaching approaches and strategies that they can apply on a daily basis and enrich their teaching tools. The program of the Summer School included five lectures on the main issues of teaching topics of all periods of Armenian history, which were carried out by both researchers of the Institute of History of the NAS of the Republic of Armenia, as well as specialists from scientific research institutes of the Republic of Armenia (Armenian Genocide Museum-Institute) and universities (Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, American University of Armenia).

The Summer School was held in an atmosphere of discussions and cooperation. The formed platform was especially effective in terms of forming professional ties and cooperation between teachers from different regions with specialists from the community, scientific research institutes of the Republic of Armenia, and universities. The speakers presented the results of their scientific academic research and how these results are brought to the practical teaching field. At the end of the summer school, feedback was provided by the participating teachers, in which they expressed positive impressions and, most importantly, they noted that they learned not only theoretical approaches, but also measurable strategies for teaching history, which they will already be able to apply in their classrooms, observe their results, etc. All teachers expressed a great desire and motivation to participate in similar initiatives again, both in existing and online formats.

Летняя школа-семинар «Технологии преподавания истории Армении: новые технологии, философия и стратегии преподавания»

27 сентября 2025 года Институт истории Национальной академии наук Республики Армения, при финансовой поддержке гранта Всеармянского фонда арменоведческих исследований, организовал в конференц-зале института летнюю школу-семинар для учителей на тему «Технологии преподавания истории Армении: новые технологии, философия и стратегии преподавания». В школе приняли участие 22 учителя истории, преподающие в разных школах Республики Армения. Летняя школа вызвала большой интерес среди педагогического сообщества Республики Армения, число желающих принять участие превысило запланированное, поэтому существует большая потребность в проведении подобных семинаров в будущем. Учителя представляли школы из разных регионов Республики Армения: Лори, Ширака, Тавуша, Арагацотна, Гегаркуника, а также школы Еревана, в том числе учителя, ранее преподававшие в школах Нагорного Карабаха. Основной идеей организации летней школы было формирование прикладных связей между научными результатами и образованием, особенно в контексте преподавания истории. Формирование практических, взаимодополняющих связей между академической наукой и педагогикой необходимо для современной образовательной среды Республики Армения, поскольку школьным учителям необходимы новые подходы и стратегии обучения, которые они могли бы применять ежедневно и обогащать свой педагогический инструментарий.

Программа Летней школы включала пять лекций по основным вопросам преподавания тем всех периодов истории Армении, которые прочитали как научные сотрудники Института истории НАН РА, так и специалисты научно-исследовательских институтов РА (Музей-институт Геноцида армян) и университетов (Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, Американский университет Армении).

Летняя школа прошла в атмосфере дискуссий и сотрудничества. Созданная платформа была особенно эффективна с точки зрения формирования профессиональных связей и сотрудничества учителей из разных регионов со специалистами из общины, научно-исследовательских институтов РА и университетов. Докладчики представили результаты своих научных исследований и рассказали о том, как эти результаты внедряются в практическую педагогическую практику. По итогам летней школы учителями-участниками были предоставлены отзывы, в которых они высказали положительные впечатления и, что самое главное, отметили, что узнали не только теоретические подходы, но и измеримые стратегии преподавания истории, которые они

уже смогут применять в своих классах, наблюдать за их результатами и т.д. Все учителя выразили большое желание и мотивацию снова участвовать в подобных инициативах, как в очном, так и в онлайн-формате.

ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ. Նոր զարգացումներ, դասավանդման փիլիսոփայություն եվ ռազմավարություններ

պատմություն դասավանդողների համար

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ

ԺԱՄԸ 10:00-17:00

2025 թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ:

ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ԲԱԺԻՆ, ՀԻՆ ԴԱՐԵՐԻ ԲԱԺԻՆ